ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Armenia
WWW.ARMENIA.TRAVEL

Հավելված 7

Մրցույթ

«Միջազգային համագործակցություն» միջոցառման շրջանակներում Հայաստանում առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում կամ աջակցություն, միջազգային միջոցառումների, հանդիպումների, ընդունելությունների իրականացում կամ մասնակցության ապահովում

(այսուհետ՝ Միջոցառում)

Մրցութային միջոցառման նկարագրությունը

Ծրագրի շրջանակներում ապահովվելու է զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության իրականացման աջակցությունը համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերությանը Հայաստանի արդյունավետ ինտեգրմանը, միջազգային երկկողմ կապերի ամրապնդմանն ու զարգացմանը:

Միջոցառման *արդյունքները*

Միջոցառման ակնկալվող արդյունքներն են՝

- Հայաստանում առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում կամ աջակցություն
- Միջազգային միջոցառումների, հանդիպումների, ընդունելությունների իրականացում, Հայաստանի համար թիրախային համարվող միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովում կամ աջակցություն

Միջոցառման *բաղադրիչները*

- Հայաստանում առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում կամ աջակցություն
    - Տրանսպորտային ծառայությունների ապահովում
    - Հյուրընկալության (կեցության և կացության) ծառայությունների ապահովում
    - Տարածքների, սրահների, տեխնիկայի և սարքավորումների ապահովում
    - Թարգմանչական ծառայությունների ապահովում
    - Անհրաժեշտ մասնագետների ապահովում (զբոսավար, խոսնակ, դասընթացավար կամ այլ)
    - Այլ համաձայնեցված ծախսեր
- Միջազգային միջոցառումների, հանդիպումների, ընդունելությունների իրականացում, Հայաստանի համար թիրախային համարվող միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովում կամ աջակցություն
    - Կեցության և կացության ծախսեր
    - Տրանսպորտային ծառայությունների ապահովում
    - Այլ համաձայնեցված ծախսեր

Դիմելու պայմանները

Միջոցառման իրականացմանը կարող են դիմել այն իրավաբանական անձինք, որոնք ունեն հետևյալ փորձն ու կարողությունները.

- Վերջին 2 տարիների ընթացքում միջազգային միջոցառումների (առնվազն 2) կազմակերպման փորձ (պատվիրակությունների այցեր, համաժողովներ, այլ)

Հետաքրքրված դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալ տեղեկատվությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ համաձայն մրցութային ընթացակարգի.

- Կազմակերպության գրանցման վկայական
- Կազմակերպության իրավասու մարմնի որոշումը՝ մրցույթին նախատեսված պայմաններով մասնակցելու վերաբերյալ
- Նմանատիպ միջոցառումների կազմակերպման փորձի նկարագիր
- Նմանատիպ միջոցառումների կազմակերպման փորձը հավաստող փաստաթղթեր
- Մատուցվող ծառայություններից յուրաքանչյուրի համար գնառաջարկ
- Ծառայության մատուցման համար նախատեսվող միջնորդավճար՝ առավելագույնը 10%-ի չափով (որը պետք է ներառի բոլոր գործառնական ծախսերը) և հաշվարկ
- Տեղեկատվություն ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին՝ ծրագրի արժեքի առնվազն 10 տոկոսի չափով:
- Մրցակցային առավելությունը նկարագրող այլ փաստաթղթեր (ըստ ցանկության)

Հաշվետվողականությունը

Ընտրված թեկնածուն սերտորեն կհամագործակցի զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության հետ՝ համաձայնեցնելով միջոցառման կազմակերպմանն ուղղված գործընթացները, ստանալով անհրաժեշտ ուղղորդումներ և տեղեկատվություն ծրագրի ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ, իսկ հաշվետվությունները կներկայացնի ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից ստեղծված մրցութային հանձնաժողովի եզրակացությանը:

Կատարված աշխատանքների բովանդակային և ֆինանսական հաշվետվությունը պետք է ներկայացվի ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտե կնքված Պայմանագրի դրույթներին համապատասխան:

Մրցութային միջոցառման ժամկետը և պայմանները

Հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետ՝ դեկտեմբեր 10, 2021թ.:

Վճարման ընթացակարգը

Միջոցառման իրականացման համար կանխավճար չի նախատեսվում:
Միջոցառման կազմակերպչական գործընթացը մեկնարկում է ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից յուրաքանչյուր միջոցառման համար գրավոր պատվերի հիման վրա և իրականացվում ֆինանսական մասի հաստատումից հետո:
Հերթական վճարումներն իրականացվելու են համաձայն կատարված աշխատանքի արդյունքում ներկայացված հաշվետվությունների և հաշիվ ապրանքագրերի: